

## ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

**ՄՈՍՈՒԼԻ ԱԹԱԲԵԿ ԼՈՒԼՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԿԱՆԴՆԱԾ  
ՄԱՀԱՐՁԱՆՆԵՐԸ ՈՒ ՆՈՅՈ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ,**

MAX van BERCHEM.

(Monuments et inscriptions de l'atabek Lulu de Mossoul.)

Հայ<sup>1)</sup>) Բաղր ալ-ղին Աբու լ'-Ֆաղափլ Լուլու, նախ հորու, ապա սպայ նուր ալ-ղին Արսլան-շահ Ա-ի, զէնզի աթարեկ Մասուլի, արդէն մի քանի տարուց<sup>2)</sup> հետէ պետական վարչութեան զլուխ էր, երբ 607 թուին [=1211 թ. յ.], իւր տէրը մեռնելով, նորան հաւատաց պետութեան վարչութիւնը և իւր մանկահասակ որդի և յաջորդ իզզ ալ-ղին Մասուդ Բ-ի ինսամակալութիւնը, Մասուդի մահից յետոյ, 615-ին [=1218], Լուլուն, որ արդէն ամենակարող անձ էր այդ ժամանակ, զահ բարձրացրեց յաջորդաբար հանգուցեալի երկու կրտսեր որդիներին, նախ՝ Արսլան-շահ Բ-ին, ապա սորս մահից յետոյ, հէնց նոյն տարին<sup>3)</sup>), Նոսիր ալ-ղին Մահմուդին, երբ այս վերջնի մահով, 631 թ. [=1233]<sup>4)</sup>, վերջացաւ և հարստութիւնը, Լուլուն ձեռք

1) *Cum Nauvaii-ի, տես քիչ յիշոյ:*

2) *Cum Ibn Khaldun-ի, առաջին նախարար Ղայմար-ի, մահից յետոյ, 595 (=1199) թ.:*

3) 616 թ. ըստ Abu'l-Fida-ի, հժմ. Deguignes: Histoires des Huns, II 6, 245.—

4) *Cum Lane-Poole-ի, Catalogue of Oriental coins in the British Museum, III, 117 (յիշառակ ԾԲՄ), երն ալ-Աթիր մեղնուն տուց Մահմուդին 619 թ. բայց այդ մասին ոչ մի ակղեկութիւն չիմ գտնում Kamil-ի մէջ, Շահմարխու է, երն ալ-Աթիրը արդէն 619-ից Լուլուին անուանում է «Մասուլի տէր», և Աբու լ'-Ֆիդան Մահմուդի մահը գնում է նոյն տարին. Տես Deguignes: Hist. Huns II 6, 247. — Weil: Geschichte der Chalifen III, 449. — D' Ohsson: Histoire des Mongols III, 258 (617 տարբէ): Միւս կողմից, 631 թուականը,*

բերեց խոլիֆից սուլթանութեան հրովարտակ — արտօնագիր, ասպա և արքայական տիտղոս Մելիք Ռահիմից և զարձաւ, ըստ իրաւանց այն, ինչ որ էր զործնականապէս, — Մօսուլի միահեծան տէրը։ Շուրջը զանուած զանազան հարեանների դէմ մզաւծ պատերազմներով, Մելիք Աշրաֆ Մուսայի հետ ունեցած զաշնառութեամբ, կամաց-կամաց իւր տիրապետութեան սահմաններն ընդարձակում և հաստատում է, քիչ աւելի յետոյ, ընդունելով Հուլազուի<sup>1)</sup> զերիշխանութիւնը, կարողացաւ խուսափել մոնղոլական արշաւանքների հետեանքից, որ Ասիայի մահմետական իշխաններից մեծագոյն մասի գահի կործանման պատճառ եղաւ։ Մեռաւ Բաղդատի գրաւումից յետոյ, 657 թ. [= 1259]<sup>2)</sup>, թողնելով Մօսուլը իւր աւագ որդի Մալիք Սալիհ Խոմայիլին, որ շուտով իւր կեանքի գնով վճարեց մոնղոլների հետ ունեցած զաշնակցութիւնից ելնելով և Ռէբարսի հետ զաշնակցելով, որ այն ժամանակ Խոյամի նախամարդն էր, 660 թ. (= 1262) Հուլազուի զօրքը Մօսուլը աւարի առաւ և Խոմայիլին, իւր մանկահասակ որդու հետ, չարաշար մահուան մասնեց. այսպիսով և վերջացաւ Լուլուեան տան աթորեկութեան հարստութիւնը<sup>3)</sup>։

որ Lane-Poole ընդունում է ըստ Ժամանակի գրամիների, հաստատում է Արու լ'-Ֆարաջը, էջ. Salhani, 435 տր. Bruns, 510 (1123-ի ակադ պէտք է կարգալ 1233). — Իրն Խալիկան, տր. de Slane I, 175 զնում է 630 թ. բամադանի վերջը (=յուլիս 1233). — Niwairi (քիչ յետոյ) Մահմուդի մահը զնում է 621-ին և Լուլուի խալիքի կողմից պաշտօնապէս ձանաչուելը 631 թ.։

1) 642 թ. սկսած, ըստ Maqrizi, յիշուած d'Olsson: Mongols, III. 88. — բուն բնագիրը Suluk, Paris 1726 և 99-ու. — Լուլուի զաշնակցութիւնից ելնելու մասին ակա Ին Chaddai. յիշուած քիչ յետոյ, և Մարիստին իշխանի կարծիքը նրա մասին, որին նա երկերեանի (տուալ) է անուանում։

2) Ըստ Իրն-Խալիքանի, Արու լ'-Ֆարաջի. Արու լ'-Ֆիտայի, Իրն Խալիքունի. Խոաւու-ի և Maqrizi-ի հետեւելով վերջնիս d'Olsson: Mongols III, 306, սիսլմամք զնում է 1258-ին։ — Ռաշիդ ալ-Ղին և Համզուլահ, յիշուած քիչ յետոյ, զնում Էն-659 վոխանակ 657, յահախ կրկնուազ մի սխար—Հմմա. Weil: Chalifén, IV, 18. —

3) Տես Իրն ալ-Աթիր, էջ. Tornberg, index (ոչ լրիւ) և Hist.

Հեղինակների տուած անզեկութիւններն ամբողջացնելու համար, մինչ այսօր ձեռքի տուի ունենալոր միայն, իր պրոցտօնական ազացոյցներ կուլույ մասին, մի հարուստ պրամական ժողովածու, որոնց արձանագրութիւնները հաստատուի են զանազան կենաք, որ կույ ունին նորս ախտղուների և զրուած քաղաքական դիրքի մասին, — որոնք նորս կախումն ու զաշնակցութիւնն են ազացուցանում զեղի Մուստափի և Մուստափի խալիքները, Էմր սուլթաններից, զեղի Մալիք Քամիլ Սուլթանմազ, Մալիք Աշրաֆ Մուստ և Մալիք Նազիր Քամիլ, Ալեյջուկ սուլթան Քէյ-Խուսրո Բ-ին, վերջապէս սկսած 656 թ. մանդայների մեծ խան Մանզուրն, Հույզուի եղբար և առաջնորդելեալին<sup>1)</sup>).

Or. des Crois. II a, index; II b, index: Nasawî, trad. Houdas 310, 412. Իր Խազար, Amedror (JKAS 1902, 804, 808); Իր Խազար, trad. De Slane I, 162, 165, 175; Իր Ղասիլ, Paris 1702, fo 309, 1703, fo 171 (բառ M. Casanova); Արու լ Ձարաջ, էջ. Salhani, տեք; տաճ. Brus 466, 475, 480, 510, 513, 537, 551—561; Խազիդ ալ-զին, տաճ. Quatremère 299, 315, 321, 327, 361, 369, 379; Իր Շիրի Houtsma, Recueil, index, vol. IV; Ձախրի էջ. Verenbourg, index: Համզալլահ Մուստափի, տաճ. Gantin, 435, Միրխանզ, էջ. Morley, 9; Արու լ Ձիզար, էջ. Cpte III, 119, 125 և, 131, 137, 170, 176, 189, 206 և Hist. or. des Crois. I, տեք; Իր Խազարն էջ. Boulaq V, 268 և, 347 և, 365; Nuwairi, Leide 21, fo 150; Մարրիզի. Suloq, Paris, 1726, տաճ. 65n, 93v; տաճ. Blochet, (Rec. Orient Latin) IN, 146 և Quatremère; Sultans Mamlouks Ja. 89, 164, 172, 181; Desguiges: Huns, index; Weill: Chalifen III, IV, index; D'Ohsson: Mongols III, 88, 238, 257 և, 306 և, 344, 355—367; De Hamer, Ichane, 72; Ritter: Erdkunde, XI, 183.—Խաչուլի սուրացութիւնը Շերիբին հաստատուել յաղթախիւ պրամական, ունի Frachna-Tiesenhausen. և որոնց մասին M. Casanova հաւաքի և շատ հետարքքական ժանքաւութիւններ, ոյն իւ շնուռականած:

1) *Shu Niebahr, Description de l'Arabie*, pl. x; Adler: Collectio nova 87, 90; Castiglioni: Monete di Milano, 153 և. Frachen: Recensio, 616; Opuscula postuma I, 75, 272; De Ilchanorum numis 16 և; Tiesenhausen: Melanges I, 54; Vaux (dans Mirkhond), ed. Morley, XXV և; Marsden: Numismata orientalia 172; Lane-Poole: CBM III,

Մի բարեկարգութեն դէպք տոխթ տուեց ինձ ի մի ժաղովիրու Լույտի մասին Եղած մի քանի արձանագրութիւն, մեծ մասամբ դեռ ևս չհրատարակուած, որից կամենում էի մի համառոտակի հրատարակութիւն կազմել, սպասելով այն հարուստ արձանագրական զանձերի երեսն զարուն, որ Միջազնեարքի մէջ կանաչուար մի խուզորկութեան ընձեռութիւն պիտի բաժին ենէ:

Սիոնֆին, երբ Մօսուր Ֆրանսիական հիւպատոս էր, ող. Բարրէ որ-Լանսիի (Barre de Lancy) խորհրդով արտադրեց այդ քաղաքի արտարկան արձանագրութիւնները: Այդ ժողովածուն, — 1881 թւականից, և որ զեռ ևս չէ հրատարակուած, առկայն որից մի ձեռադիր օրինակ ստուցել եմ Շեֆերի (Schoeler) զրոյարանից, — բավանդակում է աչ պակաս քան 645 կտոր արձանագրութիւն թէն այդ ժողովածուի բաւական ստուար մի մասը շատ մեծ համեմիւն չունի և աչ էլ մեծ պատճական արժեք, բայց և այնպէս պէտք է շնորհակալութիւն յայտնել Սիոնֆին իւր կրած աշխատանիշեան համար՝ և հետեւայ բարուածները բաւական ազացոյց պիտի լինին: Այս զէսի նու տածուած երախտապիտիւններն<sup>1)</sup>

Ա. Իրն ալ-Հասանի դամրարանում (մազար):

391. Հանգստական որտհի [hadra]<sup>2)</sup> դուսն վերելը —

177, 200 ss., IX, 305; Catalogue Oxford 7; le Gaire 344; Mohamman-  
dan dynasties 162; Ghali's Edhem: Catalogue des monnaies turcoman-  
nes 105 ss; Sionffii: Catalogue 1879 et Supplément 1891; Markoff:  
Inventaire Ermitage, 422; Casanova: Inventaire collection princesse  
Ismail 76; d'Oppenheim: Vom Mittelmeer zum persischen Golf II, 161.—  
Լույսի աբազմանիրի մասին ան Իրն ալ-Աթիր, էջ. Tornberg, I,  
6; Hist. or. des Crois. II 6, 373.—

1) Սիոնֆին ժողովածուն կազմուած է արտորերէն, Պր. Բարդ-  
մանութեամբ, որ շատ անզամ անհիշտ է, և նկատուցութիւններով:  
Առաջ բերուած թուահամարները ժողովածուի համարներն են:

2) Sionffii մի նկատուցութեան մէջ բացատրում է hadra=բնա-  
կարան, կամ բնակութեան տեղ, չայն տեղն ուր Բազուած է մի  
սուրբ, այն սրբան ուր հանգստանում է նորա տնիւնը: Այս ի-  
մասամբ և յայտնի է նաև Փ. Ասիայում: ան Ժ'Օպենհեմի արձա-  
նագրութիւնների ժողովածուի վերջին համարը:

\*Հրամայիլ<sup>1)</sup> է շինել այս. Ալպահին մարձենալու ցանկութեամբ, ալ-Մալիք ալ-Շահիմ Բայոր ալ-Դունիա վալ-դին Արտ Շ-Փաղայիլ... եւլ.

Բնագրի խմբագրութիւնը և նորան կցուած աղճառուած ուստիաւորի ոճը (Sionff 392), ենթազրել է առիս, որ առ մի կորած բնագրի արտագրութիւն—ողանձնն է, մի ենթազրութիւն, որ միայն կարելի է աեզր կատարուած խուզարկութեամբ ճշգել:

#### 401. Հանգստեան սրահի չորս պատի վրայ.

\*Հրամայիլ է կառուցանել այս [շէնքը]... հէզ սպասաւոր... ալ-Մալիք ալ-Շահիմ... Բայոր ալ-Դունիա վալ-դին .. աշխատիի հերոս<sup>2)</sup>, Իրանի Խոսրով, ուզմիլ տէր, Նախարար, ուզդաւոր իշխան, Թօռուլուքին<sup>3)</sup>), մեծազոյն

1) Բնագրի մէջ առաջ է քերուած նաև արարերէն արձանագրութիւնը, որ աւելորդ ենք համարում այստեղ զնել, բաւականակարով միայն հայ թարգմանութեամբ: Ռ. Թրզ.

2) Պարսկական միւս տիտղոսների հետևողութեամբ տիտղոսն ջահան, աւյսարհի հերոս—Shu d'Oppenheim և Lehmann-ի արձանագրութիւնների ժողովածուն Ամին-ի.—նոյնպէս և CIA I, № 95:

3) Աթարէկ=հայր իշխան (և ոչ իշխանի հայր) տիտղոսի համար աես Traehen: Opuscula Postuma II, 73; Defrémeray: Mémoires d'histoire orientale I, 117 և CIA I, 290, № 3-ի մէջ յիշուած աղքիւրները: Լուլութէն այս անդ յատկացրուծ պարսիկ և թիւրք տիտղոսները, հիշու նոյնն են ինչ որ Բանարէկի մի արձանագրութեան մէջ յիշուած Զէնդի աթարէկին առած տիտղոսները, և երկու տարրերութեամբ Քերլինի Sarre collection-ի մի բաժակի վրայ Զէպիրայի աթարէկ Մահմուդի մասին, և Տիգրանակերտի մի ոյլ արձանագրութեան մէջ, առանց արդ-դազի և թուղրուշ-անկին տիտղոսների, Մահմուտ աթարէկի համար. Shu Max van Berchem: Mémoires sur les Recueils d'Oppenheim et Lehmann.—Թուղրուշ-անկին = իշխանի բազի թիւրք տիտղոսի մասին աես Lane-Poole, CBM III, XVIII է., որը ենթազրում է թէ մի կրկնակ յատուկ անուն պիտի լինի զա, յատուկ Մասուդի աթարէկների, որոնց զրամների վրայ և զրոյմուած է. այդպէս է նաև M. Houtsma-ի կարծիքը—Իրն ալ-Աթիրի մէջ շատ անզամ այդ անունը յիշուած է իրը յատուկ անուն, էջ. Tornberg, index, և յարանման բարգութիւններ ինչպէս Ալպահին, թուղթեկին են. իրքի բուն յատուկ անուններ:

աթարեկ Սրու լ-Փաղախը Լուլու, որդի Արդալլահի, օժանդակ Դաւատացեալների Լմիքի... և այս 646 թ. (1248-49) ամիսներին:

Ե. Քազաքի Բարբ-Ախնջար կոչուած գուռը գարդարուած է օմանեան շրջանի արձանագրութիւններով և բազմաթիւ բարձրաքանդակներով, — մի առիւծ, որ պատառում է մի զոմէշ(?), մի նապատակ(?) որին հալածում է մի առիւծ, երկու օրինակ, մի նստած մարդ, ձեռքին մահիկ, վերջինս նման օրինակն հարստութեան դրամների վրայ գրոշմուած մահիկին: <sup>1)</sup>

Որովհետեւ Զենդի աթարեկների արձանագրութիւնների մէջ այդ ախտղոսը յիշատակուած է ու նուազն նիմկ անկամ, ուստի ենթազրելի է, որ զա նաշտորեան շիւղուների շարքին պատկանող մի ախտղոս պիտի լինի, առա թէ ոչ միշտ անփոփոխ կերպով արաբէկ ախտղոսից առաջ չէր զրուի, այլ յետոյ բուն յատուկ անուան հետ—Qutlug սանէկ, որ զուց եկ ախտղուների մասին Max van Berchem. Inscriptions arabe de Syrie, 29:—

1) Այս նկատողութիւններն ազացուցանում են, որ այդ քանդակները Լուլուի ժամանակակից յիշատակարաններ են: Յիրաւի, մահիկաւոր մարդը գրոշուած է ոչ թէ օրինարեան զրամների վրայ, ինչպէս առաջ է Ախուֆի այլ Զանդի հարստութեան (և Հուզագուի) զրամների վրայ, և յատկապէս Լուլուի մի քանի գրոշմուածների վրայ, ինչպէս և Միւնխէնի սինու վրայ, (որի մասին ստորև), առանց յիշատակերու այսպէս անուանուած Մասուդեան զպրոցի պղնձի վրայ փորագրուած բազմաթիւ մուրակների և համաստեղութեան նշանների. տես Adler. op. cit. № 64, pl. IV., Castiglioni, op. cit. pl. VI, VII, IX; Fraenck. Recencio 616; Opuscula Postuma I, 77; II, 104; Vaux, op. cit. pl. III; Lane-Poole, CBM III, pl. X, XI; VI, pl. II Eibent, op. cit. pl. VI, VII և միւս գրոշմաղիտութեան վերտրերաց վերը յիշատակած երկերը De Hamer. Mines de l'Orient I: Reinhard. Monuments Blacas. II, 381, 413; Lanci. Trattato delle simboliche rappresentanze, pl. I—III, V—VII, IX և այլք:

Յայտնի է, որ մահիկի մէջ նստած մարդը լուսնի յարանին է: Առա ուրեմն, Լուլուի յիշատակարանների և զրամների վրայ գրուած այդ յարանիը չենք կարող յարակցել իւր անուան մակղիբի սբազր ալ-ղինուի հետ, որ նշանակում է շկրոնի բոլորուն լուսին և նկատել իրեն մի խօսքն զինանշան: Այսպէս և Հրատի յարանիցը (emblème), — մի մարտիկ ձեռքին մի ուր և մի կարած դլուի, — գրոշմուած է օրինոք Իւլուք-արլասնի զրամների վրայ,

539. Դասն ներսի կամարի մի քարի վրայ, մասքի ոչ կողմը. արձանագրութիւնը զբուած է քարի չորս կողմը, որի վերջին բառերը՝ զանուամ ևն քարի կետրոնուած:

ոչրայել է կառոցանութ այս [շնորը]. . . Առու Ե-Փարավիլ Լուսու. . . հաւառացեալ [իշխանների առք?]. . . Հակողութեամբ Ասու ալ-ովին Սունութի(?) , ծառոյ Բայր [ալ-ովին Լուլուի], 644 [=1244—44] թուին:

Աւելորդ է որոնել ժամանակորութիւնների մէջ շինութեան ճարտարապետի՝ Ասու ալ-օվին Առերույլ ալ-Բողը-ի անունը, որովհետեւ այդ անունն, որ զանուամ է Իրն ալ-Հասանի զամբարանի (mazar) արձանագրութեան մի կտորի մէջ (Տօնութիւն 597), բոլորովին ճիշդ ընթերցանութիւն չէ երեսում:

C. Տիղրիսի ոջ ափին<sup>1)</sup> զանուամ Լուլուի պալատից, — որ այժմ Գարու-Ալերոյ է կոչում, — միայն երկու որան է մնում. հարաւային որոնք արձանագրութիւն չունին:

541. Միւս դահլիճի մեացած երեք ճակատի վրայ, հողից չորս-հինգ մէտր քարձրութեամբ —

«Փառ մեռ ալ-լուջը, Տ. թ. ինքնիշխան, ալ-Մալլի ալ-Շամինի. . . Բայր ալ-Դիւնիսիս վալ-օվին. . . եւն»:

542. Նոյն որանի խորքում, մի պատշար (muree) զուն զլիսին եկած մէծ կամարի վրայ.

որի մակղիբն էր «Հաւամ ալ-օվին»—առու կրօնիս և որ Արեի յարանից<sup>2)</sup> Ասիւծը, այնքան յահաբեալի զբոշմուած է միջնադարեան զրամների և Ասազաւոր Ասիւծի յիշատակարանների վրայ, ահանուամ է նաև Մայքստարիբների արձանագրութեան վրայ Էսթ Այյուր-ի անուան հետ, որ կոչում էր «Նազմ ալ օվին»—«կրօնի ասպ»: Մենք միայն մատնացոյց ենք անում այս ենթադրութեան վրայ, առանց ծանրանալու:

Ի՞նչ վերաբերում է զոմէշը պատասխան առիւծին, ասորական այդ նախնի զբոշմը ձեռակերպուած է Առաջաւոր Ասիւծի միջնադարեան բազմաթիւ յիշատակարանների վրայ և ոչ մի զարուհնալու առիթ չկայ, որ նոյն այդ նշաննե ենք զանուամ կրկին Ժ. դ. Նիշուտէից ոչ շատ հետու:

1) Ամբողջ քաղաքն ընկած է Տիղրիսի ոջ ափին: Պայտատիւնների զանուամ ևն միջնարեղի մաս, քաղաքի հիւսիսային կողմը: Տես ձանապարհորդութիւնների նկարագրութիւնները և քիչ քետոյ յիշատակուած Նիենհու-ի յատակաղիծը:

ավագը մարտիրոսը, Տէր, հարսիշխան, առևլավքը աղ-Շահնամ Բայր ալ պինդա վալ-ովին աթուուկ Առու լ'-Ֆաւախը Հուզ, որոի Ռութանի, ուր հաւատացեալների Խ-խանին:

№ 541 արձանագրութեան վրայ, տարբ հարիւրմեոր լոյնոթեամբ մի երիզակին անցնուած է արտիք պատերի վրայով, նուրբ տառերով և անընթեանելի մի արձանագրութեամբ: № 542 վրայ, մի շարք նոտած մարդկանց ձեւեր, բարձրաբարսուցակ, մօտ 20 հարիւրմեոր բարձրութեամբ, նման օրթոքեան զրամիներից ամանց վրայ դրամուածներին<sup>1)</sup>: Քիչ աւելի ներքե իրար հիւռուած կամարակապների նման մի քանդակաշաշար, նուրբ և անընթեանելի զրութեան հետքերով:

543. Պայտափի արտաքին պատճեների պատի զրսի երեսի վրայ, որ նոյուած է Տիղրիսին: —

Վշրամացել է այս շենքի կառուցումը. օրնուի մեր աւ-Մալիք աղ-Շահնամ. Բայր ալ-Ռիւնին վալ-ովին... Առու լ'-Ֆաւախը Հուզ, հաւատացեալների էմիրի սուրբ... Եւ այս հակուռմանամբ... (վերջը պակասաւոր):

1880 թ. Sachau գտել է Ախնջարի և Մոռուի մէջ եղած մի աւերակ իշխանի, — Khat al-hararat, — զուան վրայ, խիստ լիսառուած մի արձանագրութեան մասցորդ<sup>2)</sup>, — (արարերէն արձանագրութիւնն առանց թարգմանութեան):

Թէկ այս պատառիկը ոչ թուական, ոչ յատուկ անուն է կրուած, առկայն Բաղր ալ-Ռիւնին վալ-ովին մականաշը և ախազաներից շատերը, յատկապէս արարեկ ալ-ազամ<sup>3)</sup>,

1) Այս նկատութիւնը ձիցդ է. անս զրամագիտական աղբիւրները:

2) See Sachau: Reise in Syrien Mesopotamien, 334, մի քանի սիստեմների ուղղմամբ միայն:

3) Տիտղոսների մէջ, թէկ խեղաթիւրուած, նաև մալիք կամ սահիք ալ-Երամէն, «Տէր երկու իրակների» — Արարական և Պարսկական Հմա. CIA I, 127. սուլտան ալ-Երամէն տիտղոսը, որ յատուկ էր մասներու քաղաքուն սուլթանին և որ քիչ յետոյ Իրն Բատութան (ed. Detremonty, II, 114) տալիս է Առու Սայիդ հուզազու հարստութեան սուլթանին:

զանուամ են այսուղ նոյնութեամբ, ինչպէս Լուլուի միւս յիշտառակարսների արձանագրութիւնների մէջ։ Եւ Զախառուն իրաւամբ ենթադրում է, որ այս իշխանու կառուցուած է նոյն իշխանի ձեռքով, որի տիրապետութեան սահմանը տարածւում էր շատ աւելի հեռու գեղի արևելք, որովհետեւ յաջորդաբար տիրում է Այնջար, Մծրին և Դարա քաղաքներին։

1893թ. Օպենհայմը, Այնջարից գեղի արևելք զանուազ, Արրանի մօսով հոսող Խարուր զետի վրայ ձգուած մի մեծ քարէ կամրջի աւերակների մնացորդ սիւներից մէկի վրայ զանուած է մի փշադրած զեղեցիկ արձանագրութեան մնացորդ մի քանի քառ, շրջապատուած քարի վրայ փռագրուած զեղեցիկ քարձրաքանդակ զարդերով<sup>1)</sup>։

Այդ արձանագրութեան մէջ թէհ ովակու են թուականն ու յատուի անունը, սակայն Մալիք-Ռահիմ մակղիբը իրաւունք է տոլիս այդ զեղեցիկ յուշարձանը վերացրել Լուլուի։

Միւնխենի արքայական Մատենադարանն սւնի մի մեծ պղնձէ սինի, յեռած արծաթով, զարդարուած արձանագրութիւններով, իրար հիւսուած ձիւղերի և պտուղների շարքով (rinceaux), ծաղիկների և մանր զարդերի դրասանդներով (entrelacés), մարդոց և կորճախուծների (grifones) պատկերներով և համաստեղութեան նշաններով՝ զատառուած համակենարոն շրջանակներով, շատ զեղեցիկ և հիանալի արտեսոտի արդիւնք մի զործ, որ 1686թ. Բուղա քաղաքը Բիւրգերի ձեռքով Մաքս Էմմանուէլ Բավարացու ձեռքով յևս զրաւելու ժամանակ խած աւարից է մնացած։

(عـ) مولانا السلطان العلـم الرـحيم

بدر الدـنيـا و الـيـنـ

بـهـلوـانـ جـهـانـ خـرـوـ اـتـابـكـ الزـعـائـيـ الـالـحـ مـلـحـ

ابـوـ الفـضـائلـ لـوـلـوـ حـبـاـ هـرـاوـانـ موـاـفـيرـ<sup>2)</sup>

1) Sch. d'Oppenheim, որ. ու. II, 21.—

2) Տալիս ենք այսուղ վերև առած քերած փակագրերով կազմած սեղմ արձանագրութեան ընթերցումը, որ սիրով յանձն առաւ վերծանելու Տ. Ակրտիչ քահանայ Ղազարեան։

Այդ արձանագրութիւնները կազմում են, մի քայլ չընալի գոտի (Ա), սինու արձանագրութիւն վրայու մի այլ կտոր արձանագրութիւն եւ (Բ) սինու մէջ. զարդերի և Ա չընալի գոտու մէջ զարձեալ ուրիշ չորս կտոր արձանագրութիւն, սինու յետեց, զանազան տեղ և առանց ներքին կապահպահութեան, առաջի հայեացրից։ Այդ արձանագրութեան կտորները հրատարակուած են զանազան զիտնականների ձեռքով, որոնք միայն որումասերն են կարողացել ճշտութեամբ կարդալ. բայց սխալուել են յատուկ անունների և զիտաւոր մակարների նկատմամբ և խիստ երեակացյական ենթադրութիւններով և զանազան յատկանիներով բացատրել<sup>1)</sup>). Առաջ ըերւած պատառիկը ներկայացնում է Ա չընալի գոտու Հական մասերը, իսկականի վրայից գծուած նկարից անելով։

«Փառք մեր տէր սովոր ալ-Մայիր ալ-Խանիմ... Բայր ալ-Ռինիս վալ ովն... հաւատացեալների Էմերի սոր, Այս Շ-Փաղուիլ Լուլուն։ Միւնամիշ, որի Շ.բանի<sup>2)</sup>։ Բնա ինչ է պատրաստէ տուիլ հէս Լուլու, պարկեցու (chaste) իշխանութիւն Խափան ունի համար»։

«Ալ-Հասան, որի Արսունի։ Խոնարի սպասաւոր Զիր Այսարի։ Ալ-Բայրի<sup>3)</sup> մասնի (cellier) համար»։

1) *Skeu Jahrbücher der Literatur* 1830, Anzeigeblatt № 49, 9 ss.—  
Flügel-ի մի յօդուածը, աշխատակցութիւնը De Hammer-ի *Das Inland-ի մէջ*, 1830, 495 ss.; Lanci, op. cit. II, 169 ս., և թ. XL VIII-ի մ քննադատութիւնս արգարացնելու համար կամեմ միայն, որ տռաջիններն այդ արձանագրութիւնները վերացրում են ժե. զարդող Քիւտլուդ Էնրանէջ անունով մէկին և վերջինը նոյն իսկ սուլթան Հուլյադուն։ Միայն Lanci-ի նկարն է ձիչ, թագավորական պատճենից, թէե տառերի բնորոշ ձևերն անձիչու».

2) Այս անունը, ինչպէս և Lanci և Flügel, իս և կարդուած էմ Աբուն, իրեն ածանց «Արս-ի» Հմման. Աբուն և Աբի.—զուցէ պէտք է կարդալ Դունի.—Հմման. Իրն ալ-Աբիր, թէ. Tornberg, index.

3) Ալ Բայրի յարարերականն այսուղ չի կարող Բազր արդին Լուլուն՝ իրեն իսկ վերաբերել, որովհետեւ այն ժամանակ բնու-

مَلَكُوك



Ասանց աւելորդ աշխատաթիւն յանձն առնելու ճշգել  
այդ հինգ տարրեր կտորների մէջ յիշատակած յատուկ  
անունների անձնաւորութիւնները, — որ շատ էլ հեշտ չէ վե-  
րականգնել խակական յաջորդականութեամբ<sup>1</sup>), — բաւակա-

զիրը պէտք է լինէր — «Բայզ ալ գինի մասնաւու — Հմմա»։ Հետեւալ  
յիշատակարանի հետ կամ թէ սա մի առ եւեւոյ յարարերական  
է, որ ցոյց է տալիս Լուլուի սպասաւորներից մէկին, որ Բաղրի Եր  
կոչւում, այսինքն, որ պատկանում էր Բաղր ալ-Դինին, և կամ  
իրական մի յարարերական է, որ ցոյց է տալիս Բաղրի անունով  
որ և է մի անձն, Բաղր ալ-Դին մակղիրի սովորական, ժողովրդա-  
կանացրած ձեր։ Այս երկու յարարերական ձեկի մասին հմմա։  
CSA 1, index. Rélatif. Յամենայն դէպո, խնդիրն այստեղ վերաբե-  
րում է մի անուան, որ տէր է եղել մի ժամանակ այդ սինուն և  
որի անունը զրոշմուած է Նախկին զրոշմուածքից յետոյ, որովհե-  
տեւ այդ սկզբանը պատրաստուած է եղել մի իշխանուհու համար։  
և այդ ապացուցում է տառերի ձեր տարրերութիւնից։ Տես հե-  
տեւալ ծանօթութիւնը։

1) Բ կտորը, յեւած արծաթով և Ա զրութեան ոնով, կտորով  
է արտեստաւորի խակական ստուգուրիւնը լինել։ Միւս չորս  
կտորից առաջինը, նոյն ոնով գարձեալ, նախնական ստամու-  
շանութիւնը։

նահանք միայն մատնացոյց անելով, որ արուեստի այս գեղեցիկ արտազրութիւնը վերաբերում է Լուլուի հարստութեան շրջանին, որի յիշատակարանը համեմատելով Մօսուլի իր ալ-Հասանի դամբարանի (mazar) իրեն վերաբերեալ արձանագրութեան հետ [Sionoffi 401] մի անսպասելի արժեք ու գնահատութիւն է տունում:

Մի քանի տարի առաջ, հետեւեալ յիշատակարանն եմ գտել, մի զարդարուն պղնձէ սինու վրայ, որ այդ ժամանակ ձեռքէ-ձեռք էր անցնում Փարիզում և որ յետոյ այլ ևս աշքից փախոցրի. յիշատակարանը փորազրուած էր շորս բաժանմունքի մէջ, և որչափ յիշում եմ, պրութեան ձեր յարանման Մինիսենի սինու գրութեան ոճին:

«Փառք մեր տէր սովորու ալ-Մալիք ալ-Ռահիմ... Բայր ալ-Ղիւնիս վալ-Ղիմ.... Առև լ-Փալալ Լուլուն. Յաւացեալների էմիրի սրաշտականութիւն եւն»

Հետարքքական է համեմատել այս յիշատակարանը նախորդ յիշատակարանի և Սիոնի 401-ի հետ. նկատուած տարրեր բնիթերցուածները, զուցէ, թուականի տարրերութեան պէտք է վերաբերի. Յետեր, զրոշմուած է տիրոջ վերջին ստացողի անունը, խորանեկեալ տառերով, ուելի նուրը և սովորական գրութեան տառերով, ինչպէս Մինիսենի սինու վրայ:

«Մալիք [Մալիմ] Բայր [ալ-Ղիմ Լուլու] մառանի Տամար»:

Տեղի սկսութեան պատճառով այս բնազրերի լրիւ և վերջնական մի բացատրութիւն տալ չեմ կարող, որի համար, միւս կողմից, պէտք է նոր յիշատակարանների երեան գոլուն սպասել. բառականուած եմ միայն մատնացոյց է կարծես, այն է առաջին տիրոջ նշանը, այսինքն այն իշխանութեան նշանը, որի համար Լուլուն պատրաստել էր տուել. մի ենթագրութիւն, որ հաստատուած է նաև յիշատակարանի բազմութակութեամբ. Վերջին երեք կտորը, որչափ զատել կարելի է լուսանկար մի պատկերից և Էռու զծուածից. graffiti են, այսինքն յիշատակարանի զրոշմելոց յետոյ զրոշմուած նշաններ. խորանեկեալ և սովորական գրութեան ձեի տառերով:

Է կարծես, այն է առաջին տիրոջ նշանը, այսինքն այն իշխանութեան նշանը, որի համար Լուլուն պատրաստել էր տուել. մի ենթագրութիւն, որ հաստատուած է նաև յիշատակարանի բազմութակութեամբ. Վերջին երեք կտորը, որչափ զատել կարելի է լուսանկար մի պատկերից և Էռու զծուածից. graffiti են, այսինքն յիշատակարանի զրոշմելոց յետոյ զրոշմուած նշաններ. խորանեկեալ և սովորական գրութեան ձեի տառերով:

անելով մի քանի կէտ, որոց վրայ այս յիշտակարանները  
նոր լոյս են սփռում:

Paleographie.—Միակ բնագիրը, որից մի fac-simile  
ունիմ՝ Միւնխենի յիշտակարանին է, որ ըստ գրութեան  
ոճի պատկանում է Ասոսի կամ Եղարեան կոչուած գրու-  
թեան, այսինքն այն կոր ձեի տառերը, որ պատահուա-  
ներ արևմտեան Ասիայի և Եգիպտոսի Նուք ալ-դինի և  
Սարսղինի մինչև Ռէքարսի<sup>1)</sup> ժամանակին պատկանող ար-  
ձանագրութիւնների մէջ։ Այսեղ տարրերութիւնը միայն  
տառերի տափակ և լայն ձեի մէջ է՝ պրաշմուած Ժ.Գ. գ.  
առաջին կէսի պղնձէ անօքներից մեծապոյն մասի վրայ։  
Ինչ վերաբերում է շենքերի արձանագրութիւններին, նոյս  
ոճն անշուշտ նման է Համիդ քաղաքի պատերի վրայ ար-  
ձանագրուած օրթոր ուղթան Մահմադի<sup>2)</sup> անուան վե-  
րաբերուող յիշտակարանների մէջ եղածին։<sup>3)</sup>

Պատմութիւնն. — Եթէ Լուլուի արձանագրութիւնները  
պատմական ոչ մի նոր գէպը չեն աւելացնուած, ապա նորս  
զիւանագիտական մի տոսնձին արժէք ունին, իրենց մէջ  
յիշտակուած պաշտօնական տիտղոսների բովանդակու-  
թեան տեսակէտից։ Այդ տիտղոսները, որոնց մասին եր-  
կար խօսել աւելորդ ենք համարում այստեղ, կարելի է  
խմբակցութեան բաժանել։ 1) Այն տիտղոսները, որ սիսնի  
օրգանի մի բաժինն են կազմուած, այսինքն այնպիսիք, որ  
աւելի կրօնական բնաւորութիւն և զոյն ունին և կապուած  
են մահմեդական հաստատութիւնների հետ. այդ շարքին  
են պատկանուած ալ-դին մակղիբով կազմուած բոլոր տիտ-  
ղոսները և պատուանունները և ամիւ ալ-մա'մինին տիտ-  
ղոսը, որ այդ տիտղոսը կրողի յարաբերութիւնն էր որո-

1) See Max van Berchem. Inscription arabe de Syrie 54 ss.; CIL I, index, naskhi և այլն.

2) See Max van Berchem. Mémoires sur les recueils épigraphiques d'Oppenheim et Lehmann.

3) Արաբակի հետեւալ համարներում կը տանք Max van Berchem-ի Amida ընդարձակ և մեր պատմութեան համար ևս կա-  
րենք աշխատութեան թարգմանութիւնը, որ լոյս է տեսել երկու-  
տարի տուած։

շում խալիֆի նկատմամբ՝ կէս-կրօնական, կէս-քաղաքական մի տիտղոս, որ մի միջանկեալ կառակը կազմում այս խմբակցութեան և հետեւալի մէջ<sup>1</sup>): 2) Այն տիտղոսները, որ վերաբերում են տիտղոսը կըողի քաղաքական գրութեան և որ յիշեցնում են իւր հարաստութեան ծագումը՝ առաջ եկած սելջուկեան աւատական խշանութեան հիմքերի վրայ. այդ շարքին են պատկանում մալիճ մակղիրով, վերը յիշատակած և ուսումնասիրած, թիւրք և պարսիկ տիտղոսները, և վերջապէս 3) սուլթանական տիտղոսները, որ մի առանձին խմբակցութիւն են կազմում և առանձին ու սումնասիրութեան արժէք են ներկայացնում<sup>2</sup>):

*Խոչ վերաբերում է Մուսլի արձանագրութիւնների*

1) *Sku CIA I, index. Titres sunnites et titres en amir al mu'minin.—Նկատենք միայն, որ Լուլուն կոչում է երրենն հասաներենն ուստի, երրենն ուստի ամր ալ-ու-մին. այդ տարրերութիւնները շատ էլ զարմանալի շպէտք է թուին, որովհետեւ այդպիսի զեսպերի յաճախ կարելի է պատահել այն շրջանի մէջ:*

2) *Հետաքրքրական մի մանրամասնութիւն. Երկու պղնձեանու վրայ վորագրած սուլլիսն տիտղոսը Մոսլի 641 և 646 թ.թ. արձանագրութիւնների մէջ չէ յիշատակուած, թէև Լուլուն, ըստ Արու լ' Ֆարաջի և Նիւմէրիի, որ քիչ առաջ յիշատակուած են, սուլթանութեան տիտղոսի իրաւունքը խալիֆից ստացել էր 631 թ. ի վեր: Պէտք է նկատել նաև, որ հեղինակները սուլլիս տիտղոսը յաճախակի յիշատակում են այնպէս, ինչպէս մենք խնամն տիտղոսը. շատ առելի լայն իմաստով, քան տիտղոսի բուն քաղաքադիտական արժէքը կարելի է ենթագրել ուրենի որ սուլլիս տիտղոսի արտօնութիւնն ստացուած է միայն 646 թ. յետոյ և որ երկու պղնձեանու վրայ յիշատակութիւնները գրոշմուած են առելի յետոյ: Մի այլ հետաքրքրական կէտ ես, որ կարծես ճշգում է այս ենթագրութիւնները, այն է, որ սուլլիս ալ-խալամ վալ-միւսլիմին տիտղոսը, որ պատահում ենք Միւնխենի յիշատակարանի մէջ, զանում ենք Լուլուի մի քանի գրամմերի վրայ, սուկայն միայն այնպիսինների վրայ, որ գրոշմուած են 656-ին, որով ճանաչում է մոնղոլ մեծ խանի աւատական խշանութիւնը, իրրե թէ Լուլուն Մանզուրից ստացած լինի սուլթանական տիտղոսը իրրե գին իւր հոգատակութեան: Իւր գիւանազիտական կարողութեան մտախն տես p. 198, n. 1 և Ֆարրիի հաղորդած բնորոշ մի պատմուածքը, ուն. Dernbourg 65.—*

առաջ տարեթուին՝ 641 Ախնջարի դասն և 646 Իզն ալ-Հասանի գամբարանի (mazat) համար, դոքա ոչ մի նոր բան չեն աւելացնում պատմութեան վրայ և նոցա արժեքը լոկ հնագիտական է:

Հնագիտութիւն.—Լուլուի արձանագրութիւնների շնորհիւ կարող ենք ճշդութեամբ որոշել այն շենքերի թուականը, որոնց վրայ այդ յիշատակարանները գտնուած են, այդպէս վերը յիշատակուած երկու շենքի համար,—և մօտաւորապէս միւսների համար. այս իրողութիւնը իւր իսկական արժեքը կունենայ միայն այն ժամանակ, եթք այդ շենքերի իսկական պատկերները (relevés) կունենաք. 1766 թ. Niebuhr-ն այսպէս էր նկարագրում Մօսուլինը—«(Մօսուլի) ամահմեղական ոչ մի իշխան այնքան նշանաւոր չէ զարձրել ռիբեն, ինչպէս Լուլու անունով մէկը, Հեջիրի է-րդ զարում» ևս կառուցանել առողջ Կարա-Մէրէ (Sionffi 541—543), մի ժեմեծ շենք (քաղաքի հիւսիս-արևելեան անկիւնում, Տիգրիսի ափին), այժմ աւերակ... Այդ պալատի մէջ, գտայ շշառ մեծ զարմանքով, 80-ից մինչեւ 100 մարդկային սպասելու. բայց զօցանից մեծ մասի գլուխները կտրուած, և ու ոմանց եւս աւելի վնասուած. Նոցա ամենքի ձեռներն եւս խաչած է կրծքի վրայ եւ ամենն ես մի շարժով, սմէկը միւսի մօս, եւ այնիան նման են իշխար, որ կարծես ժանդակազործը բոլորն էլ կրծք է քափիել, նոյն կազառարի վրայ. Լուլուն կառուցանել է առողջ նու մադրասան շկամ զարոցը (պալատի հարաւային կողմը), ինչպէս և Շիահիա Իրն ալ-Հասան անունով յայտնի մի սրբի զերեզմանի վերայ մի հոյակապ շենք (պալատի հիւս. կողմը Sionffi «391 և 401»)... Լուլուն, որ ենթադրում են թէ մի ամրող շատ զեղեցիկ շենքեր է կառուցանել տուել, սկսած մադրասայից մինչև քաղաքի սլարիսոլը, այդ զերեզմանը զրաւել է քրիստոնեաններից... Ներսը, պատերի ամրողջ երկարութեամբ, նկատեցի մարմարինի մի լայն շարք եւ վեր շատ զեղեցիկ նանդակուած զարդեր ու դրասանզեր: «Այսեւզ» արձանագրութիւնները փորուած են քարի մէջ, այն ինչ մահմեղականները սովորութիւն ունին բարձրա-

քանդակ ձեռվ արձանագրել... Այսուղ զայ նոյնպէս մի շաբք արձանագրութիւններ, որոնց տառերը շինուած են պթօծած կաւիցք: <sup>1)</sup>

Նիբուրի այս շատ համառօտ, բայց Սիուֆիի հետ համաձայնող, նկարագրութիւններից կարելի է նախառեսել, որ քաղաքի հիւսիսային բաժնում, միջնարերդի շրջակայքում, պահուած են շատ հետաքրքրական ճարտարապետութեան մեսորդներ, զարդարուած շատ աւելի հետաքրքրական զարդագրերով, մահմեզական պատկերագրական մի զեղեցիկ նմուշ, որ համեմատելով Իլլոնիայի, Համիտի և այդ շրջանի միւս քաղաքների պատերի վրայ քանդակած մարդկային պատկերների հետ, ինչպէս և դրամների և Սելջուկեան, Օբխորեան, Զանգիեան և Եյուրեան շրջանի արուեստի պղնձի վրայ թողած փորագրութիւնների հետ, ոլեաք է խոստվանել որ մի նոր և անսպասելի արժեք են ստանում մեր աշխատ: Ասխայի այդ անկիւնում Strzygowski-ի «Hettitische Ecken-Zeichen» ժ. և Ժ. գորերում մի արձանագործական գրաբոց ունեցաւ, որ մինչև այժմ զեռ ևս քաւականաչափ նկատողութեան և ուշագրութեան չէ արժանացել: <sup>2)</sup> Նիբուրից սկսած մինչև Սիուֆի, երկու հնախոյզ սերունդ պեղել ու խուզարկել են Նինուէի նիստը, որ Մօսուլից մի քայլ միայն հեռու է, բայց Լուլուի շենքերի արձանները զեռ ևս անյայտ են. զուցէ այժմ արդէն շատ

1) See Niebuhr, Voyage en Arabie II, 292, և քաղաքի յատկագիծը, pl. XLVI.

2) Դրամների վրայ գրոշմուած պատկերներն առիթ են եղել բազմաթիւ զիտական աշխատութիւնների, բայց և այնպէս առանց բաւարար լոյս սփռելու նոցա ծագման վրայ. յիշատակենք միայն Adler, Castiglioni, Lanci, Reinaud, de Longpérier, Lavoix, Fraehn, Bartholomaei, Bergmann-ի անուններն. ինչպէս նաև Kara-bacek, Lane-Poole, Nützel, Sarre, Migeon. ինչ վերաբերում է արձանագործութեան, ինչպէս և խուզարկուների զեկուցուների և ուսումնասիրութիւնների մէջ այսուղ այնտեղ ցրուած յիշատակարաններին ու վաւերագրերին և Անատոլուի երկաթուղու բացումից յետոյ ամեն կողմ զանուածներին, զեռ մինչ այժմ մի կանոնաւոր ուսումնասիրութեան չեն արժանացել:

ուշէ նոցա որոնելը<sup>1)</sup>:

Վերջադիմնելով կասենք, որ Լուլուի սինիները պատկանում են պղնձի անօթների արուեստի այն շրջանին, որ ծաղկեց առավելապես ժամ և ժԴ. զարերում, ուր փոխարերական իմաստով կրող պատկերներ զրոշմելու սպառութիւնը նոյնպէս, շատ մեծ զեր է կատարում և որ յառակապէս կոչւում է Մօսուլի զպրոցի արաւետու թէն այդ պղնձէ անօթները բազմաթիւ ուսումնասիրութիւնների տակիթ են տուել, բայց և այնպէս մի քննտեկան և հիմնական ուսումնասիրութեան կարիք է զպացւում նոցա ծագման, զարդարման, աշխարհապատկան տարածութեան և բաշխման մասին, ինչպէս և արուեստագիտական զպրոցի պատկերագրութեան և զարդագիտութեան (décoration) մասին<sup>2)</sup>:

Ֆր. բարդ. Տիրայր վարդապետ

1) Մօսուլում զանուած՝ Լուլուի շենքերի և յիշատակների մասին պատահարար յիշող հեղինակների մէջ, որ սակայն մի նոր ոչը ընկնող մանրամասնութիւն չեն տալիս, աչքի էմ անցըրել նուե — Ritter. Erdkunde XI, 184, 197; Oppert. Expedition en Mésopotamie, I, 178; Budner. Kurdistan 235; Müller—Simonis. Amrénie, Kurdistan et Mésopotamie 383; d'Oppenheim. ob. cit. II, 175; Cuinet. Turquie d'Asie II, 822; Միայն Բինշութե Travels and Researches II, 124, մատնացոյց է անում և առաջ բերում այդ շենքերից հանուած մի կանոցի զլուխ. աչքի առաջ չունենալով այդ նկարը, որ յիշատակում էմ ըստ Բիտ-ի. չզիտիմ արդիօք հատզարեան թէ միջնադարեան արձանագործութեան մասին է խօսքը: Տես հետեւել ծանօթութիւնը:

2) Մօսուլի զպրոցի ենթագրութիւնը հիմնում է այս երեք կետի վրայ.—ա) Տիզրիսի և Ավրաստի վերին ակունքների հարուստ և նշանաւոր պղնձէ հանքերի զոյտութիւնը. բ) Իրն Սայիդ աշխարհապետի յիշատակած մի տեղը, որ գովում է, 1270 թ. մօսուլը, Մօսուլի պղնձէ իրերը և անօթները, որ արտահանում էին զանազան երկիրներ, և որ մատնացոյց են արել De Longpier, Lavoix, Rey և Migeon, բայց որ առաջ չեն բերել անմիջապէս և որ մինչդե այժմ ես չեմ կարողացել վերստուգել. գ) բազմաթիւ, մեծ հմտութեամբ և արտեստով պատրաստած պղնձէ անօթների զոյտութիւնը և որ արտեստագէտների կողմից յայտնի է Մօսուլի (al-mansili) անունով: Առանց ուրանալու այս ազացոյցների արժեքը, պէտք է նկատենք, որ ինչ վերաբերում է առաջին կետին, Փոքր Ասիայի և Մի-

ջազետի շատ քաղաքներ, որ նոյնչափ մաս են եղել պրինցիպութեան կենտրոններին, ինչպէս և Մօսկվ, պղնձէ իրերի և անօթների արուեստի ծաղկման վայրեր են հանդիսացի, առանց յիշատակելու. Դամակոսը, Կայիրէն և մահմետական աշխարհի միւս մեծ կենդրութեան, ուր այդ արուեստը ծաղկելու մասին յիշատակութիւնը՝ Դարով միւս երկու ազգույցներին, զորո միայն ազգուցանում են, որ Մօսկվի պղնձէ արուեստի արդիւնք անօթները շատ յարդի էին ԺԴ. դարում և որ այդ քաղաքի արուեստագործները մի առանձին շահ ունեին անօթների պատրաստութեան անդի յիշատակութեան խնդրի մէջ, ուստի և զրումում էին նաև ծաղման վայրը: Բայց զորո զեռ ևս չեն արտօնում մի որոշ աշխարհագրական տեղագրութեամբ առամանափակում դրսոցի վերագրի այդ բոլոր պղնձէ անօթները, որ նոյն արուեստագիտական հաշվագիր և ոճի արդիւնք են, զոնէ այդ անունը պէտք է՝ շատ զգուշացր վերապահութեամբ զործ ածել—Մի վորք ուսումնաբանթեան մէջ, որ ի մի և՛ ժողովին այս խնդրին վերաբերեալ բոլոր վաւերագրերը և յիշատակել նախապէս լոյս անում աշխատաթիւնները (Journ. Asiat. X տրու, III, 20 ս.); և Նկատել իմ առողջ այն կշիռ ունեցող հանգամանքը, որ մինչ այսօր մեզ միայն յայտնի է միակուռ պղնձէ զործ անունը, որի մասին կարելի է նույստապես ասել, որ Մօսկվի մէջ էր պատրաստամանաբանութեան, եթէ կան զեռ ևս այզպիսի անօթներ, Լուլուն պատկանողներն այդ շարքին են պատկանում:

Այս էջերը ապագրուելուց ի վեր Sarre Jahrbuch der Keg.-preuss. Kunstsammlungen-ի մէջ, 1905 թ. Հեft 11 և Migeon Gazette des Beaux Arts-ի մէջ, 3-ր թ. XXXIII, 441 ս., հրատակել են շատ հետաքրքրական պատառիկներ, կաւից թրծած մարդկային և կենցանիների գանձագան պատկերներով ու զրումուածներով, որ երկան է եղել Մօսկվի շրջանից և ԺԴ. դ. պատկանող, շատ համարես ցուցութերի վրայ հիմնաւծ Sarre զրում է ինձ, որ Աննա-վուլի-ի ձեռքով Լուլունի շէնքերից երեան հանած կանացի գլուխը (անս նախորդ ծանօթութիւնը), նոյն կարդի իրերին է պատկանում: Այս կարեւը նկատողութիւնն արդէն մի ուկոս է զծում այդ պատկերագրութեան ծաղման մասին, որ այսուհետեւ կարող ենք կազմել Լուլունի սնուան հետ:

\*Monuments et inscriptions de l'atabek Lulu de Mossoul par Max van Berchem (Orientalische Studien Theodor Nöldeke, zum 70-tem Geburtstag .. Erste Band. Gieszen, 1906, (Verlag von Alfred Töpelmann), pp. 197—210.—\*)

— 122 —